



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրջյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի 2022 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված անկախ աուդիտորական եզրակացությունը հաստատելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի 04.04.2023թ. թիվ 9/15-Լ որոշմամբ Պալատի 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնելու համար որպես անկախ աուդիտ ընտրվել էր «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերությունը, որը կատարված ուսումնասիրությունների արդյունքում 28.04.2023թ. ներկայացրել է անկախ աուդիտորական եզրակացություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 կետի 4-րդ ենթակետի պահանջներով,

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

- 1. Հաստատել Պալատի 2022 թվականի ֆինանսական գործունեության աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնող «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության 28.04.2023թ. անկախ աուդիտորական եզրակացությունը:**
- 2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

28 ապրիլի 2023թ.  
թիվ 10/12-Լ  
ք. Երևան